Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՍՄԲԱՏՅԱՆԻ՝

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԽՄԲԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ»

ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության սոցիոլոգիական վերլուծության կենտրոնում է ձգձգված (protracted) և խորարմատավորված (deep-rooted) էթնոքաղաքական կոնֆլիկտներում սոցիալական մոբիլիզացման ֆենոմենը, որը քննելու համար հեղինակի կողմից՝ որպես տիպական համատեքստ և էմպիրիկ օրինակ ընտրվել է Ղարաբաղյան կոնֆլիկտը: Հայ հասարակության դինամիկան, զարգացման միտումներն ու պլանավորման հորիզոնը պայմանավորող այս բազմամյա կոնֆլիկտը շարունակում է մնալ ժամանակակից հայ սոցիոլոգիական քննախոսության և պետության զարգացման հետագիծը պայմանավորող կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Հենց այս հանգամանքն է ատենախոսության թեմային հաղորդում խիստ արդիականություն:

Հիմնախնդիրն առավել ակտուալանում է հեղինակի կողմից սոցիալական մոբիլիզացիան որպես դրվագային կամ միանվագ երևույթ դիտարկող մոտեցումները հաղթահարելու ձգտման շնորհիվ, ինչպես նաև այն որպես բազմամակարդակ, ինքնավերարտադրվող սոցիալական գործընթաց տեսականորեն հիմնավորելու և վերլուծելու մտադրությամբ: Այս տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման ծագումնաբանության և վերարտադրման համապարփակ սոցիոլոգիական վերլուծություն երբևէ չի կատարվել:

Ատենախոսական աշխատանքն ունի ամբողջական և հստակ կառուցվածք՝ լակոնիկ և համապարփակ վերնագրված բաժիններով: Այն բաղկացած է

ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված են հետազոտության հասկացութային գործիքակազմը և տեսամեթոդաբանական մոտեցումները: Առաջին ենթագլխում Հ. Սմբատյանը սահմանում է ատենախոսությունում քննարկվող հիմնական եզրույթները, անդրադառնալով հարակից և փոխկապակցվող հասկացությունների վերլուծությանը, կատարում վերջիններիս վերաբերյալ բազմապլան տեսական մոտեցումների համադրում:

Երկրորդ ենթագլխում հեղինակը փորձում է դիտարկել սոցիալական մոբիլիզացումը ոչ միայն որպես կոլեկտիվ գործողություն, այլև որպես դյուրկհեյմյան իմաստով սոցիալական փաստ՝ որպես համադրված, ինքնավերարտադրվող գործընթացների ամբողջություն, որում հասարակության անդամները կամ խմբերը ինքնաբուխ կերպով ներգրավվում են բարձր ռիսկայնության սոցիալական գործողություններում՝ ուղղված որոշակի կոլեկտիվ նպատակի, որոնք էլ կարող են հանգել սոցիալական շարժման (տե՛ս էջ 41-42):

Երրորդ ենթագլուխը սոցիալական մոբիլիզացման հայեցակարգման համար ավելացնում է հորիզոնական անհավասարությունների տեսության «ոսպնյակը՝ հանգամանալից անդրադառնալով ուղղահայաց սոցիալական անհավասարությունների դասական մեկնաբաններին և սոցիալական մոբիլիզացման վերլուծության տեսանկյունից շեշտը տեղափոխում ժամանակակից այնպիսի տեսությունների կարևորության վրա, ինչպիսիք են հարաբերական զրկման, ռեսուրսների մոբիլիզացման, ֆրեյմավորման և կոլեկտիվ ինքնության տեսությունները:

Չորրորդ ենթագլուխը պարզաբանում է ատենախոսության հետազոտական մեթոդաբանությունը՝ անդրադառնալով տվյալների հավաքման և վերլուծության մեթոդներին, ընտրանքային ռազմավարությանն ու դաշտային գործիքակազմին:

Ատենախոսության երկրորդ գլխում, սոցիալական մոբիլիզացման կառուցվածքային և պատմահամեմատական բնութագրիչների վերհանման նպատակով, Հ. Սմբատյանը ներկայացնում է Ղարաբաղյան շարժման ծագումնաբանությունն ու տարեգրությունը՝ ցուցակագրելով դրա տարբեր փուլերում երևան եկած հորիզոնական

անհավասարությունների դրսևորումներն ու առաջացող կոլեկտիվ բողոքի ու ընդվզումների փոխառնչությունները մոբիլիզացման գործընթացների հետ:

Ատենախոսության երրորդ գլխում, որը վերնագրված է «Գործորդությունը և հավաքական գործողությունը սոցիալական մոբիլիզացման համատեքստում», լիովին բացահայտված է հեղինակի գիտական ճաշակն ու որակական տվյալների հետ աշխատելու կարողությունն ու ոգևորությունը: Մասնավորաբար, 3.1 ենթագլխում վերլուծված են կամավորների անհատական շարժառիթներն ու խմբային ինքնության տարրերը, իսկ 3.2 ենթագլխում բացահայտված են կամավորության սոցիալական դիմագիծն ու պատերազմի և խաղաղության ընկալումը կամավորների հետ հարցազրույցների հիման վրա:

Հեղինակն այստեղ հիմնավորում է այն դրույթը, որ «կոնֆլիկտը ձևավորում է ոչ միայն պատմություն, այլև՝ աշխարհընկալման որոշիչ սոցիալական մեխանիզմ, որը խարսխվում է ապագայի նկատմամբ թերահավատությամբ, անցյալի հետ չլուծված հաշվեհարդարներով և ներկայի մեջ խորացված գոյաբանական արդիականությամբ» (տե՛ս էջ 99):

Չորրորդ գլուխը ամբողջացնում է ատենախոսության խնդիրների իրագործումը՝ ներկայացնելով համապարփակ եռամակարդակ մոդել, որն, ըստ հեղինակի, բացատրում է, թե ինչպես են ձգձգված կոնֆլիկտներում կառուցվածքային անհավասարությունները, խմբային դինամիկան և անհատական դրդապատճառները փոխազդում՝ ծնելով սոցիալական մոբիլիզացումը: Այս գլխի երկրորդ ենթագլխում զծագրվում և պարզաբանվում են սոցիալական մոբիլիզացումը պայմանավորող միկրո-մեզո-մակրո մակարդակի գործոնների փոխառնչություններն ու փոխազդեցությունների շղթաները:

Գլուխը թույլ է տալիս հեղինակին լիովին դրսևորել իր սոցիոլոգիական երևակայությունն ու դուրս բերել փաստահենք վերլուծության այն տեսական պրոդուկտը, որին հեղինակը ձգտում էր ատենախոսության մեկնարկին:

Թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը բավարար են: Կատարված է թեմային առնչվող ակադեմիական գրականության բազմաղբյուր քննություն, համադրություն և հեղինակային մոտեցմամբ նպատակային սինթեզում:

Ատենախոսության հիմնական արժանիքներից է այդ բազմազան տեսությունների համակարգման ճանապարհով հասկացութային խառնաշփոթից պատշաճ ձևով ձերբազատվելու ու աշխատանքի ներքին տրամաբանությունը պահպանելու կարողությունը:

Աշխատանքի դրական կողմերից է կոնֆլիկտաբանական և զուտ սոցիոլոգիական վերլուծության հմուտ կապակցումը, տեսական կոնցեպտների ինքնուրույն վերաիմաստավորումը, որն էլ փաստական հենքի որոշակի պակասի դեպքում՝ հեղինակը փորձում է լրացնել տեսական ընդհանրացումներով և մասնագիտական ինտուիցիայի միջոցով:

Ատենախոսական աշխատանքը ձևակերպված է բարեխղճորեն, դրևորված է գիտական լեզվամտածողություն, կիրառված է ճշգրիտ տերմինաբանություն: Աղյուսակներն ու գծապատկերները նպաստում են ատենախոսի հիմնական թեզերի դյուրին ներկայացմանը, իսկ հարցազրույցներից ուղիղ մեջբերումները առավել պատկերավոր են դարձնում հեղինակային տեքստը:

Ատենախոսությունը իրականացված է մեկնաբանող սոցիոլոգիայի շրջանակում՝ առաջնահերթություն տալով իմաստաստեղծման գործընթացների բացահայտմանը: Մեթոդաբանական առումով՝ հմտորեն համադրված են առանձին դեպքերի ուսումնասիրությունն ու պատմահամեմատական վերլուծությունը, ինչպես նաև՝ հարուստ էմպիրիկ նյութի վերլծությունը՝ խորքային և նարատիվ հարցազրույցների, գործընթացների հետագծելիության/հետքավորման (process tracing) և երկրորդային աղբյուրների բավականին ծավալուն քննության միջոցով:

Ատենախոսությունն ունի տեսական և կիրառական նշանակություն, քանի որ մշակված սահմանումները և տեսական անդրադարձը կարող են հարստացնել կոնֆլիկտի սոցիոլոգիայի և սոցիալական շարժումների վերաբերյալ առկա հայերեն մասնագիտական նյութերը՝ օգտակար լինել հայերեն սոցիոլոգիական բառարանների և դասանյութերի պատրաստման համար: Հակամարտության դիտարկումը՝ որպես սոցիալական իրականություն կառուցող միջավայր հետաքրքիր և համարձակ մոտեցում է, և կարող է հիմք հանդիսանալ հետագա համեմատական ուսումնասիրությունների համար: Ստացված արդյունքները կարող են կիրառվել նաև պետական

քաղաքականության ոլորտում, մասնավորապես՝ «Իրական Հայաստանի» հայեցակարգի և «Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրին»-ի վերանայումներում՝ խաղաղաշինության գործընթացներում հաշվի առնելու կոլեկտիվ հիշողության և սոցիալական մոբիլիզացման սցենարների իներցիան և դրանցով պայմանավորված սոցիալական մոբիլիզացման նոր ալիքների առաջացման հավանականությունն ու հետևանքները:

Ատենախոսության գիտական նորույթը արտացոլված է հետևյալ արդյունքներում՝

- Մշակված է եռաստիճան հասկացութային հայեցակարգ, որը թույլ է տալիս մեկնաբանել սոցիալական մոբիլիզացումը ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների համատեքստում:
- Վերլուծված և բացահայտված է սոցիալական անհավասարությունից մինչև սոցիալական մոբիլիզացում շղթայական մոդելի կիրառությունը Ղարաբաղյան շարժման դեպքի համար՝ գործընթացների հետազծման կամ հետքավորման մոտեցման միջոցով:
- Հիմնավորված և գիտականորեն փաստարկված է ձգձգված և խորարմատավորված կոնֆլիկտների մեկնաբանությունը՝ որպես սոցիալական իրականության կառուցվածքային համատեքստ, որը պայմանավորում է տարածաժամանակային պրակտիկաների որոշակի ձևանմուշների պահպանություն և ինքնավերարտադրություն:
- Էմպիրիկ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների և երկրորդային տվյալների վերլուծությամբ բացահայտված են մի շարք նոր իրողություններ՝ կապված Ղարաբաղյան կոնֆլիկտի էսկալացիաների հիմքով ձևավորված կամավորական շարժումների ծագումնաբանության և զարգացման, ինչպես նաև մասնակիցների արժեքային և ռացիոնալ շարժառիթների ու պատերազմ-խաղաղություն, հաղթանակ-պարտություն ընկալումների շուրջ:

Ատենախոսական աշխատանքն ունի հաջորդիվ ներկայացվող որոշ սահմանափակումներ, որոնց վերաբերյալ կարևորում ենք ատենախոսի կարծիքն ու մեկնաբանությունները.

- Հեղինակը, միտումնավոր դուրս թողնելով «վերևից ներքև» (top-down) կազմակերպվող մոբիլիզացիաները և կենտրոնանալով քաղաքացիական, «ներքևից վերև» (bottom-up) նախաձեռնվող կոլեկտիվ գործողությունների վրա, ձգտում է պահպանել սոցիալական մոբիլիզացման իր մոդելի ներքին տրամաբանությունն ու ապահովել վերլուծական հստակություն: Սակայն, նման մոտեցումը հանգեցնում է մոդելի կիրառելիության զգալի սահմանափակման, քանի որ անտեսվում է Ղարաբաղյան կոնֆլիկտի տարբեր փուլերում, հատկապես՝ 2008 թ.-ից հետո, գերակշռող սոցիալական մոբիլիզացիայի վերից-վար ուղղորդման համակարգը, ինչպես նաև՝ վերջինիս սոցիալ-քաղաքական նշանակությունը, դերակատարներն ու գործառույթները: Բացի այդ, հեղինակը սոցիալական մոբիլիզացիան առաջարկում է դիտարկել՝ որպես դյուրկհեյմյան իմաստով սոցիալական փաստ: Սակայն, նման մոտեցումը առավել տեղին է այն դեպքում, երբ սոցիալական մոբիլիզացիան ունի ինստիտուցիոնալացված, կրկնվող, հավաքական և պարտադրող բնույթ, այսինքն՝ առավելապես վերից-վար կազմակերպման պայմաններում: Արդյունքում՝ ատենախոսության եզրափակիչ հատվածում ներկայացված գործնական բնույթի դիտարկումները ձևակերպված են ընդհանուր մակարդակում, մինչդեռ դրանք կարելի էր ավելի հստակ կապել կոնկրետ ինստիտուցիոնալ դերակատարների կամ քաղաքական գործիքների հետ՝ անդրադառնալով ոչ միայն սոցիալական մոբիլիզացիան խթանող, այլև այն խոչընդոտող կամ զսպող գործոններին:
- Ատենախոսության տեսական գլուխներում առաջարկվող միկրո–մեզո–մակրո եռամակարդակ մոդելը, ընդհանուր առմամբ, կառուցված է տրամաբանական և հիմնավոր կերպով: Թեև առաջարկվող եռամակարդակ մոդելը տեսականորեն համոզիչ է, այն հիմնականում փորձարկվում է մեկ կոնֆլիկտի օրինակով, և մի շարք տեղերում մոդելի բաղադրիչների միջև սահմանները և շղթայի պատճառահետևանքային կապերը մնում են որոշ չափով լղոզված: Այդպես, օրինակ՝ Գծապատկեր 7-ում և դրան վերաբերելի տեքստային հատվածում, հեղինակը բնութագրում է փոփոխականների միջև փոխառնչությունները՝ որոշ դեպքերում դատողություններ անելով նաև կապի ուղղվածության մասին, որը

վիճելի է՝ հաշվի առնելով զուտ որակական մեթոդներով տվյալների հետ աշխատանքի սահմանափակումները:

- Հեղինակի բացահայտումներից մեկն այն է, որ «կոլեկտիվ գործողությունը փոխառնչության մեջ է անհատական կենսափորձի և արժեքների հետ, ինչը փոխպայմանավորված է կոլեկտիվ ինքնության ձևավորմամբ, և երկուսն էլ՝ կառուցվածքային պայմանների փոխազդեցությամբ» (էջ 115): Սակայն, այդ մոտեցման շրջանակում սոցիալական մոբիլիզացիայի դերը կոնֆլիկտային գործընթացի դինամիկայում լիարժեք չի հստակեցվում: Ատենախոսի առանցքային պնդումներից մեկը կոնֆլիկտի՝ որպես սոցիալական իրականությունը կառուցող միջավայրի ըմբռնումն է: Հետևաբար, կոնցեպտուալ առումով՝ կարևոր էր նաև պատասխանել այն հարցերին, թե կոնֆլիկտի ո՞ր փուլերում է առաջանում սոցիալական մոբիլիզացումը, և ի՞նչ գործառույթներ այն ունի կոնֆլիկտի էսկալացիայի, պահպանման կամ լուծման տեսանկյունից:

- Աշխատանքի էմպիրիկ հատվածում 1988, 2016 և 2020 թվականների սոցիալական մոբիլիզացման գործընթացների համեմատական վերլուծությունը հետաքրքիր է և լավ կառուցված: Սակայն համեմատությունը հիմնականում իրականացվում է ներհայաստանյան տրամաբանությամբ կամ ներպետական այլ կոնֆլիկտների, քաղաքացիական պատերազմների հետ համեմատվելով՝ չհասնելով արդի փուլի վերլուծության: Կարծում ենք, որ Ղարաբաղյան կոնֆլիկտի ակունքների ու ծագումնաբանության առավել մանրամասն քննությունը, հատկապես՝ ԽՍՀՄ փլուզման և Ղարաբաղյան շարժման ձևավորման առումով, նպատակահարմար կլիներ իրականացնել քաղաքական և միջէթնիկ հարաբերությունների տեսական մոտեցումների հիմքով, ինչպես նաև հագեցնել ավելի խիտ և բազմազան փաստական նյութով՝ որոշակիորեն կապակցելով այն նաև արդի զարգացումների հետ:

- Կոլեկտիվ հիշողությունը աշխատանքի մեջ ներկայանում է կարևոր, բայց որոշ չափով դրվագային ձևով: Տեսական առումով հնարավոր էր այն ավելի հստակ կապել սոցիալական մոբիլիզացիայի վերարտադրության մեխանիզմների հետ՝ ցույց տալով, թե ինչպես են հիշողության ռեժիմները (օր.՝ հերոսական, սելեկտիվ

տրավմատիկ, զոհաբերական) տարբեր փուլերում ակտիվացնում տարբեր մոբիլիզացիոն տրամաբանություններ: Այս տեսանկյունից նպատակահարմար կլիներ նաև հիմնավորել կամավորական շարժման և կամավորների վրա կենտրոնանալու գիտական անհրաժեշտությունն ու տարանջատել կամավորության ինքնաբուխ և ինստիտուցիոնալացված ձևերը, այդ թվում՝ Երկրապահ կամավորականների միության օրինակով: Միաժամանակ կարևոր կլիներ ցույց տալ հերոսացման և պայքարի շուրջ ձևավորվող օրակարգերն ու դրանցում ներգրավված դերակատարների իրական սոցիալական շարժառիթները, որոնք հաճախ թաքնված են մնում սոցիալական ցանկալիության սպասումների (social desiarability bias) ճնշման ներքո:

- Մեթոդաբանական առումով՝ աշխատանքը կշահեր, եթե առավել հստակ ներկայացվեին երկրորդային վերլուծության համար օգտագործված աղբյուրների ընտրության սկզբունքներն ու դրանց հետ աշխատանքի ընթացակարգը, ինչպես նաև՝ հավելվածում ներկայացվեր հեղինակի կողմից նշված ավելի քան 120 երկրորդային աղբյուրների ամբողջական ցանկը: Օգտակար կլիներ նաև կցել տվյալների հավաքման գործիքները, այդ թվում՝ նարատիվ հարցազրույցների ուղեցույցները և կիրառված այլ հարցաշարերը:

Նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքն ու որակը, այլ վերաբերում են աշխատանքի տեսական և մեթոդաբանական զարգացման հնարավոր ուղղություններին:

Եզրակացություն

Հ. Ա. Սմբատյանի՝ «Սոցիալական մոբիլիզացումը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում. խմբային և կառուցվածքային գործոնների սոցիոլոգիական հայեցակարգում» ԻԲ.00.01 - սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապարփակ գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմայի: Հեղինակի կողմից առաջ քաշված տեսամեթոդաբանական և մեթոդական խնդիրները լուծված են, նորույթ պարունակող դրույթները՝ փաստարկված:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և համառոտագրում հեղինակի հիմնական թեզերն ու կատարված հետազոտության արդյունքները:

Թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ՝ Հ. Ա. Սմբատյանը, արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Բաբլոյան

«Ա.Գ. Բաբլոյանի ստորագրությունը հաստատում եմ»:

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝

Մ. Հովհաննիսյան

30.01.2026